ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համադասական և ստորադասական նախադասությունների ուսուցման փոխներգործուն մեթոդներ և հնարներ

Կատարող՝ Ա.Միսակյան

Երևանի Ս.Հովսեփյանի անվան հ.115 ավագ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և Հայ գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Վ.Վարդևանյանի անվան հ.173 հիմնական դպրոց»

Ղեկավար՝ Ա.Վարդանյան

Երևան 2023

Ներածություն

Քերականությունն ունի 2 բաժին՝ձևաբանություն և շարահյուսություն: Այս բաժինների ճիշտ իմացությունից է նաև կախված մեր ճիշտ խոսքը: Եթե ձևաբանությունը գաղափար է տալիս լեզվական միավորների՝ ***բառերի*** մասին, ապա շարահյուսությունը ուսումնասիրում է ***հաղորդակցման*** միավորները՝ նախադասությունները:
Նախադասությունը բառ է կամ բառերի խումբ, որն ունի ամբողջական միտք, ստորոգում և ավարտուն հնչերանգ:
Ընդհանուր առմամբ նախադասությունները 2 տեսակ են՝ պարզ և բարդ:
Պարզ են այն նախադասությունները, որոնք ունեն ***մեկ*** ստորոգում և հնչերանգային ավարտվածություն:

Օրինակ՝ Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում:

Կամ

Հայն իր պատմությունը բնավ չի սիրում:

Բարդ են 2 և ավելի ստորոգում ունեցող նախադասությունները, որ ամբողջացված են նաև հնչերանգով:

Օրինակ՝ Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, որ հայը իր պատմությունը բնավ չի սիրում: (Գ. Նժդեհ)

Կամ

Լեռները գնում, մտնում են երկինք,
Ձորերդ գալիս, կիրճերն են մտնում,
Խավարն է խրտնում բարձրության ահից,
Խորության ահից աստղերն են քրտնում: (Հ. Սահյան)

Բարդ նախադասությունները 2 տեսակ են՝
1. բարդ համադասական նախադասություններ
2. բարդ ստորադասական նախադասություններ

Բարդ նախադասության 2 տեսակներն էլ կապակցվում են և՛ համադասական ու ստորադասական շաղկապներով, և՛ շարահյուսությամբ:
Բարդ ստորադասական նախադասությունները կարող են կապակցվել հարաբերական դերանուններով:
Օրինակ՝ Կյանքս ավարտելու վրա եմ արդեն,
Բայց ինքս, ավա՜ղ, դեռ անավարտ եմ. . . (համադասական շաղկապով)

Մոռանա՜լ, մոռանա՜լ, ամեն ինչ, ամենքին մոռանալ,
Չհիշե՜լ, չխորհե՜լ, չափսոսա՜լ, հեռանա՜լ: (Վ. Տերյան)

Արդյոք գիտե՞ր եղնիկը, որ այդ խուլ շառաչը անու՜շ-անուշ օրորել է իրեն: (Ավ.Իսահակյան)

Ինչ թաքցնում ես, այն կորած է, ինչ տալիս ես, այն քոնն է: (Ժող. ասացվածք)

Խոսքը բերանից դուրս եկավ, չի թողնի սառչի, կկատարի:

Ահա այս նախադասությունների հետ կապված հետազոտական աշխատանք կներկայացնեմ ես: Կփորձեմ օգտագործել նոր մեթոդներ, որոնք կատարում եմ հայոց լեզվի դասաժամերին:

Համադասական և ստորադասական նախադասությունների ուսուցման փոխներգործուն մեթոդներ և հնարներ

1.Բարդ համադասական նախադասության ուսուցման փոխներգործուն մեթոդներ և հնարներ

Առաջին հերթին հիշում ենք համադասական և ստորադասական շաղկապները և տարբերակում դրանք:
Համադասական շաղկապներն են՝ և, ու, բայց, իսկ, սակայն, այլ, կամ, էլ, նաև, ապա, այսինքն, ուրեմն, բայց և, բայց և այնպես, ինչպես և, մինչև իսկ, կամ թե, և կամ, ապա թե ոչ, և՛...և՛, թե՛...թե՛, ո՛չ...ո՛չ:
Այս շաղկապները իրար են կապում համազոր, համադաս նախադասություններ:
Օրինակ՝
Մեղմիկ սոսափում էր ուռենին, **և** ջրաղաը հին օրերից մի անուշ հեքիաթ էր պատմում:
կամ
Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, ու մինչև գարուն ոչ ոք ոտք չի դնում այնտեղ:

Հիշեցնում եմ նաև, որ եթե համադասական նախադասություն բաղադրիչները միմյանց հետ կապակցված են և, ու, կամ շաղկապներով և ունեն մեկ ընդհանուր ենթակա, այդ դեպքում տրոհում չի կատարվում:
Օրինակ՝
Մայրը միշտ էլ իր հոգուց մի բան տեղափոխում է իր զավակների կրծքի տակ և բոց ու ջերմությամբ է արթացնում թրմած և շշմած զավակների սրտերում: (Գ. Նժդեհ)

Ուշադրություն պետք է դարձնել նաև, որ ու, և, կամ շաղկապները բացի համադաս նախադասություններից կարող են կապել նաև համադաս անդամներ:
Օրինակ՝
1.Շատ հետաքրքիր է եղել Եղիշե Չարենցի և Ավետիք Իսահակյան հանդիպումը:
2.Դիլան դային ու Սոնան մանկության ընկերներ էին եղել:
3.Մեր երկրին այժմ անհրաժեշտ է նոր Անդրանիկ զորավար կամ Գարեգին Նժդեհ:

Կարևոր է իմանալ նաև, որ բացի շաղկապներից համադաս նախադասությունները կապվում են շաղկապական բառերով:Դրանք են՝ այնուամենայնիվ, այսուհանդերձ, համենայն դեպս, գեթ, լոկ, սոսկ, անգամ, նույնիսկ, մե՛րթ...մե՛րթ, մեկ...մեկ,հետո, այնուհետև, նշանակում է, այն է, նոր միայն, առաջին, երկրորդ, երրորդ և այլն:
Օրինակ՝
Իմ երկար կյանքը ապրեցի այսպես.
Մե՛րթ շաղեցի շողեր պես-պես,
Մե՛րթ առածի ասածի պես
Ծովի վրա ջուր մաղեցի:
Հիշեցնում եմ, որ համադաս նախադասությունները կապվում են նաև շարահարությամբ:
Այսպիսի նախադասություններն էլ լինում են և՛ միակազմ և՛ երկկազմ:

Օրինակ՝
Իմ պապը հողի հետ
Խորհել ու խոսել է,
Ամպի հետ արտասվել,
Ջրի հետ խոսել է...

Այսպիսով՝ բարդ համադասական նախադասության բաղադրիչները մեկ ամբողջի մեջ միավորվում են հիմնականում իմաստային առումով, մեկ ընդհանուր հնչերանգով և կապակցվում են համապատասխան շաղկապներով կամ առանց շաղկապների, ուղղակի շարադասությամբ:
Աշակերտները պետք է իմանան, թե ինչպես են տարբերակելու շաղկապով և անշաղկապ նախադասությունները և փորձեն դրանք փոխարինել մեկը մյուսով, ինչպես օրինակ՝
Արարատյան դաշտի հրաշագեղ աշունն էր, մի լուսապայծառ առավոտ էր:

Անշաղկապ, այսինքն շարահարությամբ կազմված նախադասությունը դարձնել շաղկապավոր նախադասություն:
Արարատյան դաշտի հրաշագեղ աշունն էր, և մի լուսապայծառ առավոտ էր:
կամ
Մթնաձորում ստվերները թանձրանում են և անթափանց խավար է լինում:
Մթնաձորում ստվերները թանձրանում են, անթափանց խավար է լինում:

Համադաս նախադասություններ կարող են լինել նաև բարդ ստորադասական նախադասությունների կազմում, ինչպես այս օրինակում.
Լևոնը նավահանգստի բոլոր խորտկանոցների այցելուն ու զարդն էր, **բայց** առափնյա թեյաստանը նրա համար Օդեսայի ամենից հյուրընկալ վայրն էր, **որտեղ** նրան միշտ ընդունում էին ջերմ ու սրտաբաց:
Թեման ուսումնասիրելիս աշակերտներին կարելի է բաժանել համակգործակցային խմբերի: Նրանք աշխատում են առանձին ուղղություններով: Հետո բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորում և դարձնում ենք դասարանի սեփականությունը : Նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջացնում ենք , երբ միավորում ենք խմբային աշխատանքների արդյունքները:
Այս մեթոդի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերերում:

Այս մեթոդն ունի հետևյալ նպատակները.
1. Նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն՝ անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին.
2. Նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռել.
3. Ընկերների հետ համագործակցելով՝ օգնել գտնելու առաջադրված հարցերի պատասխանները.
4. Մշակել փորձագիտական կարողություններ՝ ըստ տրված նյութի ամբողջացնելու և հաղորդելու տեղեկատվությունը.
5. Հնարավորություն ստեղծել միաժամանակ դառնալու և՛ սովորող, և՛ սովորեցնող.
6. Նոր նյութը յուրացնել արդեն դասարանում.

Այս սկզբունքով աշխատելու ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Դասի լավ ընկալման համար օգտագործում եմ նաև Վենի դիագրամը, որը հիմնականում գործածում ենք նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ գաղափարները, երևույթները միմյանց համադրելու և դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:



Շատ կարևոր է նաև, որ աշակերտները կարողանան ճիշտ կետադրել բարդ համադասական նախադասությունները, որոնց բաղադրիչ նախադասությունները թե՛ շաղկապներով, թե՛ անշաղկապ կապակցման դեպքում միմյանցից տրոհվում են ստորակետներով:

Օր.՝ 1.Բոլորս ելանք, ոտքի կանգնեցինք, մեզնից ամենակրտսերը մոտեցավ սեղանին, վերցրեց գիրքը, սկսեց կարդալ այն:

2.Բլուրների հետևից երևացին նիզակների սուր ծայրերը, և մի քանի րոպեից հետո հայտնվեցին մի խումբ ձիավորներ:

Շատ կարևոր է, որ աշակերտներն իմանան. եթե համադասական նախադասության բաղադրիչները միմյանց հետ կապակցված են **և** կամ **ու** շաղկապներով և ունեն մեկ ընդհանուր ենթակա, այդ դեպքում տրոհում չի կատարվում:
Օրինակ՝ Այրին ութ տարեկան Լևոնին հանձնում է մի ատաղձագործի **և** սկսում է ուրիշների համար ճերմակեղեն կարել: (Շիրվ.)

Լևոնը շնորհակալություն հայտնեց մեզ մեր այցելության համար **ու** շտապեց դեպի դռները:

Կարևոր է նաև հետևյալը.երբ համադասական նախադասությունների բաղադրիչների կապը պակաս սերտ է, և դրանք միմյանցից բաժանվում են համեմատաբար տևական դադարով, գրավոր խոսքում տրոհվում են միջակետով:

Օրինակ՝ Այս վիթխարի խաչի ձախ թևի վրա մեր խցերն էին. ես միայնակ էի քանդված խցում. իմ փոքրիկ լուսամուտը նայում էր Արագածին:

Աշակերտի ճիշտ ընկալման համար շատ կարևոր են անհատական թերթիկները, որոնցում լինեն տարբեր առաջադրանքներ՝ կապված համադասական նախադասության հետ: Ուստի կազմվում են վարժություններ, որոնք էլ օգնում են՝ էլ ավելի ամրապնդելու ողջ թեման:

1.Կազմել բարդ համադասական նախադասություններ՝ կապակցելով տրված պարզ ընդարձակ նախադասությունները:

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է: Մինչև գարուն ոչ ոք ոտք չի դնում անտառներում: Ծառերն ընկնում են, փտում: Ընկած ծառերի տեղ նորն է ծլում: Մթնաձորում ստվերները թանձրանում են: Անթափանց խավար է լինում: Արջերը որսի են դուրս գալիս: Վարազներն իջնում են ջուր խմելու: Գիշեր է դառնում : Գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները:

2.Տրված հատվածից դուրս գրել բարդ համադասական նախադասությունները, կետադրել:

Արարատյան դաշտի հրաշագեղ աշունն էր մի լուսապայծառ առավոտ էր: Փոշոտ փշատենիների արանքից փայլում էին խաղողի ոսկեղեն ողկույզները դեղձը նուռն ու խնձորը ասես հրեղեն գնդակներ լինեին հուռթի այգիներից անուշ բուրմունք էր խնկում: Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով մեր գլխին ծփում էր սոսիների խորհրդավոր սոսափը երկուսս էլ լուռ էինք տարված մեր տեսիլքներով: Սքանչելի է Արարատյան դաշտը:

3.Կազմել անշաղկապ բարդ համադասական նախադասություններ՝ շարունակելով տրված պարզ ընդարձակ նախադասությունները և նշանակել համապատասխան կետադրությունը:

Ամառային արձակուրդների օրերն էին .....:
Երկնքում կուտակվել էին սև ամպեր .....:
Պատանին պահարանից հանեց իր սիրած գիրքը .....:
Պարտեզում աճում էին բուրավետ հիրիկներ .....:
Փողոցները լեցուն էին մարդկանց հոծ շարքերով .....:

2.Բարդ ստորադասական նախադասության ուսուցման փոխներգործուն մեթոդներ և հնարներ

Բարդ ստորադասական նախադասությունը հասկանալու համար առաջին հերթին ձևակերպվում է կանոնը: Այսինքն այն բարդ նախադասությունը , որի բաղադրիչ մասերն իրար հետ կապված են ստորադասական հարաբերությամբ, այսինքն՝ բարդ նախադասության բաղադրիչները չունեն իրենց ինքնուրույնությունը, և նրանց արտահայտած միտքը հասանելի է լինում բարդ նախադասության մյուս բաղադրիչի կամ բաղադրիչների հետ ունեցած կապի մեջ, կոչվում է **բարդ ստորադասական նախադասություն:**
Օրինակ՝ Երբ կեռասենիները փթթում էին ծաղիկներով, իսկ մեղուներն անվերջ աղմկում էին նրանց ծաղկաբաժակների մեջ, մի կատարյալ խրախճանք էր լինում այդ փոքրիկ պարտեզներում: (Ս. Զ.)
Արդյոք գիտե՞ր եղնիկը, որ այդ խուլ շառաչը անու՛շ-անուշ օրորել է իրեն և, ո՞վ գիտե, գուցե երազներ է բերել իրեն, սիրուն երազներ: (Ավ.Իս.)

Բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ առնվազն լինում են երկու բաղադրիչ նախադասություններ, որոնցից մեկը գլխավոր է (գերադաս), մյուսը՝ երկրորդական (ստորադաս), այսինքն՝ վերջինս գլխավոր նախադասության որևէ անդամն է՝ արտահայտված առանձին ստորադաս նախադասությամբ:

Որպես բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ մասեր՝ կարող են հանդես գալ երկու կամ ավելի նախադասություններ:
Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կապակցվում են.

- **Ստորադասական շաղկապներով.** *որ, թե, եթե, որպեսզի, որովհետև, թեև, թեկուզ, թեպետ, թեպետև, մինչ, մինչև, մինչդեռ, թե որ, թեկուզև, քան թե, մինչև որ, հենց որ, եթե ոչ, քանի որ, քանի դեռ, չնայած որ:*
  Օրինակ՝ Երանի՛ նրան, , ով հուն է փորում,
  ***Որ** մենք այդ հունով երգենք ու գնանք:* (Ս.Վ.)

  *Երկիրն սկսեց սպասել, **թե** ինչպես կզարգանան դեպքերը:*

- **Հարաբերական բառերով.** *որը, ով, ինչ, ինչպիսի, որքան, ինչքան, որտեղ, ուր, երբ, ինչպես, քանի, որչափ, որպիսի* և այլն:

Շաղկապներն ու հարաբերականները ոչ միայն կապակցում են երկրորդական նախադասությունները գերադասին, այլև ձևավորում են նրանց շարահյուսական պաշտոնը:

Հարաբերյալը՝ որպես կապակցման միջոց, հանդես է գալիս գերադաս նախադասության մեջ: Որպես հարաբերյալ՝ հանդես են գալիս գերազանցապես ցուցական դերանունները՝ *այն, այնպիսի, այնպես, այնքան, այնչափ, այնտեղ* և այլն, որոնք գլխավոր նախադասության մեջ ձևականորեն կատարում են այն պաշտոնը, որ կատարում է երկրորդական նախադասությունը: Հարաբերյալը և հարաբերականը կազմում են կապակցող զույգ՝ *այն ... որը, այն ... ինչ, այնպիսի ... ինչպիսի, այնպես ... ինչպես, այնքան ... որքան, այն ... որպես, այն ... երբ, այն ... թե, այնքան ... որ, այնպիսի ... որը և այլն:*
Օրինակ՝ Ինչքան արցունք է ընկել իմ աչքից՝
Այդքան մարդիկ են իմ աչքից ընկել:
Ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում:

Ինչ թաքցնում ես, այն կորած է. Ինչ տալիս ես, այն քոնն է:
Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

- **Շարահարությամբ** (առանց շաղկապների)
  Վերջին դեպքում գլխավոր ու երկրորդական նախադասությունների կապը ձևավորվում է հնչերանգով: Նման դեպքում հնչերանգի ամենաբնորոշ հատկանիշը ձայնի տոնի բարձրացումն է ու նրան անմիջապես հաջորդող զգալի դադարը:

Օրինակ՝ Խոսքը բերանից դուրս եկավ, չի թողնի սառչի, կկատարի:

Գործընկերս կհամաձայնի, միասին կաշխատենք:

Բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքը միատեսակ չէ: Այդ կառուցվածքը որոշում է տվյալ բարդության մեջ եղած բաղադրիչների հարաբերությունների ամբողջությամբ: Բարդ ստորադասական նախադասության մեջ գերադաս նախադասությունը ստորադասի հետ կապակցվում է տարբեր կառուցվածքային յուրահատկություններով ու հարաբերություններով: Բարդ ստորադասական նախադասությունները լինում են՝ **երբաղադրիչ և բազմաբաղադրիչ:** Վերջինս իր հերթին ունի իր տարատեսակները՝ **համաստորադասական, տարաստորադասական, ենթաստորադասական:**

- **Երկբաղադրիչ**
  Օր.՝ Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
  Քնար դառան աղբյուրները Բինգյոլի:(Ավ. Իս.)

- **Բազմաբաղադրիչ**



Օրինակ՝ Նա ամեն անգամ հիշում էր մորը, երբ քաղցած էր լինում, որբ մրսում էր , երբ հոգնած էր լինում:

Շատ կարևոր են բարդ ստորադասական նախադասության մեջ ստորադաս նախադասությունների դիրքերը՝ առաջադաս, միջադաս, վերջադաս, որոնցով էլ պայմանավորված է կետադրությունը: Բոլոր երեք դիրքերում էլ ստորադաս նախադասությունը գերադասից տրոհվում է ստորակետով:

Օրինակ՝ Երբ Կոմիտասը բարձրացավ բեմ, բոլորը զարմացած նրան էին նայում:

Բոլորը զարմացած նրան էին նայում, երբ Կոմիտասը բարձրացավ բեմ:

Բոլորը, երբ Կոմիտասը բարձրացավ բեմ, զարմացած նրան էին նայում:

Երբ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս նախադասությունները կապող **որ, թե, եթե** շաղկապները զեղչված են, ապա գլխավոր և երկրորդական նախադասությունները տրոհվում են բութով:

Օրինակ՝ Ես այժմ գիտեմ՝ ինչ բան են երջանկությունն ու տառապանքն:

Ստորադասական նախադասությունները ճիշտ ընկալելու համար կազմվում են առաջադրանքներ հետևյալ պահանջներով:

1. **Ընդգծել երկրորդական նախադասությունները, որոշել շարադասությունը և նշանակել կետադրությունը:**

   Երբ մարդու մեջ մարում է գիտելիքների ծարավը նա դադարում է մարդ լինելուց:

   Այն տունը ուր գրքեր չկան նման է հոգուց զրկված մարմնի:
   Գրքեր կան որ դրսից նման են հոյաշեն դղյակների:

2. **Տրված գլխավոր նախադասությունների համար կազմել նախադաս կամ վերջադաս երկրորդական նախադասություններ, կապակցել ու կետադրել:**

   Ճանապարհորդները գիտակցում էին .....:

   Ֆիդայիների խումբը բարձրացավ լեռը .....:

   Զբոսաշրջիկները ..... նորից շարժվեցին առաջ:

   Թանգարանը ..... Երևանի կենտրոնից հեռու չէ:

   ..... ստվերներն սկսում են խտանալ:

   ..... այդ ժամանակ զբաղվում եմ ընթերցանությամբ:

Թեման ամփոփելիս հաճախ օգտագործում եմ ԳՈՒՍ-ը, որն ունի մոտավորապես այսպիսի տեսք:

Բարդ ստորադասական նախադասություն		
Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորել եմ

Եզրակացություն

Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների ուսուցման նպատակը աշակերտների խոսքի ճիշտ ձևակերպման կարևոր տարրերից է: Անհրաժեշտ է, որ աշակերտը կարողանա ճիշտ ձևակերպել իր միտքը, որպեսզի դիմացինը հասկանա նրան, հաշվի առնի նրա ասածները և իմանա, որ գործ ունի գրագետ ու խելացի անձնավորության հետ:

Մարդու կատարյալ վիճակի համար շատ կարևոր է, որ նա ունենա ճիշտ ձևավորված խոսք, որի համար անհրաժեշտ է սիրել մայրենին, պահպանել ու պաշտպանել այն, չնայած ոչ թե մարդն է պահում լեզուն, այլ լեզուն է պահում մարդուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գ. Գարեգինյան- «Ժամանակակից հայոց լեզու», ԵՊՀ-ի հր. Երևան 1984թ.
2. Յու.Ավետիսյան- Հայոց լեզու:Շարահյուսություն, Եր. Զանգակ-97,2009թ.

Բովանդակություն

Ներածություն.....1

Համադասական և ստորադասական նախադասությունների

ուսուցման փոխներգործուն մեթոդներ և հնարներ 3

1.1.Բարդ համադասական նախադասությունների ուսուցման փոխնորգործուն մեթոդներ և հնարներ.....3

1.2.Բարդ ստորադասական նախադասությունների ուսուցման փոխնորգործուն մեթոդներ և հնարներ.....7

Եզրակացություն.....11

Օգտագործված գրականության ցանկ.....12